



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒԻՄ

ՄԱՐՏԻ 27-ին, ՀԻՆԳՇԱԲԹԻ երեկոյան ժամը 4-ին, Հոգմոր ճեմարանում իր երկրորդ շահնեկան դասախոսությունը կարդաց պրոֆ.-դոկտ. Սվաճյանը «Մարդակազմության մասին» թեմայով, որն ուսանողության կողմից լսվեց մեծ հետաքրքրությամբ: Վերջում վերատեսուչ սրբազնը շնորհակալություն հայտնեց հարգելի դասախոսին՝ իր օգոտակար և բովանդակալից դասախոսության համար:

* * *

ՄԱՐՏԻ 30-ին, ԿԻՐԱԿԻ, ՄԱՂԱԶԱՐԴ: Այս տարի էլ Մայր Սթոռում Մաղազարդի սրբազն արարողությունները կատարվեցին մեծ հանդիսությամբ և ավանդական շնորհակալությունուն համար:

Օրվա տոնի ուրախ առիթով Ս. Էջմիածին ուխոտի էին եկել բազմաթիվ ուխոտավորներ և հավատացյաներ, Մայր Տաճարի շրջափակը, եկեղեցին լին էին ժողովրդական խունդ բազմությամբ: Օրը գարնանային էր, չի թիմ և արևոտ: Բոլորի ձևորին՝ ուսենու դարձար ճյուղեր: Մայր Տաճարը, Մեծ պահոց տիսոր օրերից հետո, զարդարվել է տոնականորեն: Ամեն կողմ ուրախ տրամադրություն: Մայր Տաճարում հնչում են յնձափց՝ Մաղազարդի տոնին նվիրված հոգեթով շարականները:

Մայր Տաճարում հանդիսավոր սույր պատարագ է մատուցում դիրաշնորհ Տ. Մահակ արքեպիսոպոս:

Առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայութիք, Խելից ական թափառական թափառակ, երգով ու աղոթքով, սրտառուչ բարեմազմությունների տակ, առաջնորդվում է Մայր Տաճար:

«Հայր»-ի ժամանակ քարոզում է պատարագի սրբազնը Մաղազարդի տոնի և խորհրդի շուրջ, կոչ անելով հավատացյալներին՝ Քրիստոսի առաջ փոնը մեր սիրուն ու մաքուր խոհերը, ընդունել Փրկչին միշտ ու արխությամբ, հոգեկան և բարոյական պատ-

րաստությամբ և լինել մաքուր տաճարներ, որտեղ Աստված կարենա բնակվել:

Սույր պատարագի ալարտին, Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, Մայր Տաճարից առաջնորդվեց դեպի Վեհարան, իր հայրապետական օրհնությունները բաշխելով հանդիսավոր շքերթի պահին, ճանապարհի երկայնքն ի վար խուռներամ հավաքված բազմության:

Երեկոյան ժամը 5-ին Մայր Տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվեց ժողովացէք»-ի խորհրդավոր արարողությունը:

Մայր Տաճարը նորից լին է հավատացյանների բազմությամբ, ճեմարանականների օջողորմութեան գո զդում բաց մեզ, Տէր շարականի հաղթական հնչումների տակ բացվում են Մայր Տաճարի վարագույրները: «Դունբացէք»-ի արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

ԱՊՐԻԼԻ 2-ին, ԱՎԱԿ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հետմիջօրենին փափկեց Հոգմոր ճեմարանը, Զատոկվա արձակուրդի առմիզ: Երեկոյան ժամանակ ուսանողությունը խոստովանվեց վերատեսուչ սրբազնի առաջ, որը վերջում խոսեց մի գեղեցիկ խրտական ճեմարանականներին ու մեղեղիները:

Մայր Տաճարում հանդիսավոր սույր պատարագ է մատուցում դիրաշնորհ Տ. Հայրության նշանակության վրա: * * *

ԱՊՐԻԼԻ 3-ին, ԱՎԱԿ ՀԻՆԳՇԱԲԹԻ, «ՅԻՇԱՍԱԿ ԾՅԹՐԵԱՑ ՏԵԱՄՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»: Մայր Տաճարում հանդիսավոր սույր պատարագ մատուցուց հոգեշնորհ Տ. Մերուպապ վարդապետ Անթարյանը: «Հայր մեր»-ից առաջ գերազնորհ Տ. Հայրազուն սրբազնը աշխարհաբար թարգմանությամբ կարգաց Ս. Թարսեղ Հայրապետի ուսեցեք ինձ, զավակներս, և ես ձեզ իբրև սիրելի և

Հարազատ որդիների՝ Տիրոջ երկյուղը պիտի սովորեցնեմ» ճառը:

Սուլբր պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Համարտ սուրբ պատարագի հաղորդվում է Համատացյաների մի մեծ բազմություն Հաղորդվում են նաև Հոգեոր Ճեմարանի ուսանողները:

Երեկոյան ժամը 5-ին, գերաշնորհ՝ S. Սահակ արքապիսկոպոսի հանդիսավորությամբ, Մայր Տաճարի Ավագ Սեղանի վրա կատարվում է Ոտնալվայի հանդիսավոր արարողությունը: Մրրազանը վանում և ապա օրհնված յուղով օժում է Մայր Աթոռի միարաններից 12 հոգու ոտքերը, ըստ առաքալների թիմի: Արարողությունից հետո, Համատացյաներին բաժանվում է օրհնված յուղ:

Ոտնալվայի արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը:

«Ի գիշերի ժամուն հսկումն է», երեկոյան ժամը 8-ին սկսվում է Ավագ հինգշաբթի օրվա մեծ հսկումը: Մայր Տաճարը նորից սպավորվել է: Սեղաններն ու գրակալները ծածկված են սեղլ Թախծոս մրմնչում և Քրիստոսի մատնության ահավոր զեպքին նվիրված երգերն ու շարականները: Կարպացվում են Համապատասխան սաղմուներ և աստվածաշնչական համարներ: Մինչև ուշ գիշեր Մայր Տաճարում հսկում է նաև Համատացյալ բազմությունը Մայր Աթոռի միարանության ներ: Սահակ սրբազանը մթության մեջ բարզում է «Յուղա, համրութել վ մատնես զՎարդապետն» բնաբանով:

Հսկումին ներկա է նաև Վեհափառ Հայրապետը, որը և կարդում է մատնության առաջին Ավետարանը:

ԱՊՐԻԼԻ 4-ին, ԱՎԱԳ ՈՒՐԲԱՅ, «ՅԻՇԱ-
ՏԱԿ ԶԱՐՉԱՐԱՆԱՑ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ»: Ժա-
մը 8-ին Մայր Տաճարում կատարվում է հա-
շելության կարգը, մասնակցությամբ ամբողջ
միարանության և Ճեմարանի ուսանողության:

Երեկոյան ժամը 5-ին Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը նախագահում է Ա-
վագ ուղբաթի Քրիստոսի Թաղման կարգի կատարման հանդիսության:

Իշման Ս. Սեղանի առաջ պատրաստված
է Քրիստոսի գերեզմանը, թաղումը ներկա-
յացնող սրբազան իրերով: Այսօր կարծես
տարբեր նշանակություն ունի «Ոյս զուարթ»-ը: Ապա ողբաձայն հնչում են թաղ-
ման տիսուր և մելամաղձոտ մեղեդիները:

Նախատնակից հետո կազմվում է «Թա-
փոր թաղմանն»: Մայր Տաճարում սովորու-
թյուն է թաղման կարգը կատարել դուրս,
Մայր Տաճարի շուրջ կազմված թափորով:
Այս րողորդից հետո, Մայր Տաճարում սրա-
սուշ կերպով նշում է «Աստուածածին Կոյս
Մարիամ» տաղը: Ապա հազարամուր հավա-
տացյաներ ըրջապատում են Փրկի գերեղ-
մանը:

ԱՊՐԻԼԻ 5-ին, ԱՎԱԳ ՇԱԲԱՅ, «ՔՐԻԳԱ-
ԼՈՒՅՑ, ԵՐԵԿՈՅԱՆ ժամը 4-ին Մայր Տաճա-
րում սկսվում է Ճրագալուցից գեղցիկ արա-
րողությունը, երեք «Շղորմեա-ների աւ-
մոնքով»:

Վեհափառ Հայրապետը պաշտմապես իշ-
նում է Մայր Տաճար և կարդում ստեղծա-
գործության պատմությունը Մննդոց գորից:
Հովուր Ճեմարանի ուսանողները հաջողու-
թյամբ և ապրում կատարում են Դանիելի
գրքի հանդիսավոր Ծննդեցէք, Պոհնեցէք,
ովկեցէք սաղմոսի դաշն և սրտահուզք եր-
բցուղության հետ, հուշիկ բացվում է Ավագ
Սեղանի վարագույքը: Ճրագալուցից երեկո-
յան սուրբ պատարագի հանդիսավոր պահն
է: Պատարագում է գերաշնորհ S. Հայիա-
զում սրբազանը, Սուլբր պատարագի ըն-
թացքում, իի՞ և հանդիսավոր, հնչում է դի-
րիժոր-կոմպուտիսուր Օհան Դուրյանի դաշ-
նավորած Քրիստոս յարեաւ-ը, Քրիստոսի
հրաշափառ հարության հոգեոր Հիմնը, Մայր
Աթոռի երշախիմբի կողմից, զիկավարու-
թյամբ երածշատագետ պր. Հրանտ Գեորգյա-
նի:

Համարտ սուրբ պատարագի, Վեհափառ
Հայրապետը նախագահում է Զատկվա նա-
խատնակի հանդիսության: Հաղորդվում են
շատերը:

Ապա Վեհափառ Հայրապետը եկեղեցա-
կան թափորով և Այսօր յարեաւ շարակա-
նի երգակցությամբ առաջնորդվում է Մայր
Աթոռի միարանական սեղանը, որը օրհնե-
լուց հետո բարեհաճում է սեղանակից լինել
«Թաթախման» գիշերվա միարանական հա-
շել:

«ԶԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵԾ ԱԻԵՏԻՔ, ՔՐԻՍՏՈՍ
ՅԱՐԵԱՆԻ Ի ՄԵԾԵԼՈՅ»:

ԱՊՐԻԼԻ 7-ին, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «ԱԻԵ-
ՏՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ» և «ՅԻՇԱՏԱԿ
ՄԵԾԵԼՈՅ»: Մայր Տաճարում պատարագնեց
հոգեշնորհ S. Հարություն արեղա Մատեն-
ջյանը: Հավարտ սուրբ պատարագի կատար-
վեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեց-
լոց»:

ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Զատկի արձակուրդներից հետո վերաբացվեց Հոգևոր Ճեմարանը:

Ճեմարանում երեկոյան ժամը 4-ին երրորդ անգամ լինելով դասախոսեց պրոֆ.-դոկտ. Սվաճյանը՝ օԵրկարակեցության մասին, որը լսվեց հետաքրքրությամբ:

Վերջում վերատեսուչ սրբազնը շնորհակալով հայտնեց բովանդակալից դասախոսության համար:

ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ, ԿՐԿՆԱՋԱՍԻԿ և «ՅԻՇԱ-ՍԱԿ ՔԻՒՐԱՀՈՐ ՆԱՀԱՏԱԿԱՑՅՈՒՆ ՄԵՐՈՑ ՀԱ-ՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՒԱՀԱՐԱՐ» Սահմանադրությանը՝ Մայր Տաճարում պատարացեց արժանապատիլ Տ. Հակոբ քահանան Տեր-Հակոբյանը: Պատարագի վերջում քս րոպեց գերաշնորհ Տ. Մահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, ոգեկոչելով խնկելի հիշակը մեր բյուրավոր նահատակների:

Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց Հոգեհանգիստ:

ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին Հոգևոր Ճեմարանում դասախոսուեց Երևանի Պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երիցագույն դասախոս Գրիգոր Չուբարը «1903 թվականի ե-

կեղեցական կալվածների գրավումը և համաժողովրդական ապստամբությունը նոր փաստաթղթերի լույսի տակ թեմայով: Դասախոսության բարեհանձել էր ներկալինել նաև Վեհափառ Հայրապետը: Դասախոսությունը լսվեց հարաճուն հետաքրքրությամբ և գոհովակությամբ:

Վերջում վերատեսուչ սրբազնը սրտագին շնորհակալությունը հայտնեց շատ շինիլ դասախոսության համար:

ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ, ԱՇԽԵԱՌՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄԿԱՆԱՋ ԿիրԱԿԻ: Մայր Տաճարում պատարացեց Գեղարդի վանքի նորընտիր վանահայր Հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերակացու արժանապատիլ Տ. Հովհաննես քահանան Մարուքյանը՝ Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակի խորհրդի վրա:

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 4-ին Հոգևոր Ճեմարանում դասախոսեց Երևանի թժշկական ինստիտուտի ավագ դասախոսներից և վերաբուժական ամբիոնի վարիչ, թժշկական նվիտությունների որկտ.-պրոֆ. Հակոբ Հակոբյանը մՄարդու ներվային համակարգը թեմայի շորոց: Դասախոսությունը լսվեց խոր հետաքրքրությամբ:

Վերջում վերատեսուչ սրբազնը շնորհական և օգտակար դասախոսության համար:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ֆինլանդիայի գրողների խումբը, որի կազմում էին Ֆինլանդիայի շվեդ գրողների միության նախագահ, հայտնի հասարակական գործիչ, գրաքննադատ Յարլ Ովֆ Տալկիվստը, միության անդամներ՝ բանաստեղծ և նովելիստ Ռոլֆ Պաուլանդը, բանաստեղծ, աստվածաբանության դոկտոր՝ Յարմար Կրուկֆորը, լիապարի, տպարանի բանվոր Լեո Օդրենը և ֆինն գրող բանաստեղծուհի Մարիա Լիլյա Վարտիան:

ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ, ՇԱՐԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Երանի բոնցքամարտիկների հավաքական թիմի պատվիրակությունը,

պատվիրակության ղեկավար պր. Յաթհլա Ամիր Ալայի գլխավորությամբ: Պատվիրակության կազմի մեջ էին երկրի բոնցքամարտի ֆեղիքացիայի քարտուղար Մահմուդ Մարգիր Ամանին, բոնցքամարտի սեկցիայի նախագահ Արտաշես Սադինյանը, անվանի բոնցքամարտիկներ՝ Իրանի քառակի շեմպին Ամիր Յավարին, Եռակի շեմպիտոններ՝ Հասան Փաքանդամը, Վազիկ Ղազարյանը, Սուլեյման Փիրզանյանը, կրկնակի շեմպիտոններ՝ Իզարիա Խլանուլը, Կարապետ Քուչարը և ուղիղներ:

Հյուրերը եղան Մայր Տաճարում և թանգարանում: Հյուրերին բացատրություն տվեց թանգարանի վարիչ Տ. Հուսիկ արեղան:

